ՆՈՐ-ԴԱՐ

№ 178 ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 28 Նոյեմբերի 1902 Հինգշաբթի, 28 Նոյեմբերի ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 178

Տարեկան 10 րուբ., վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կոպ., ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., հատով 5 կ.։ Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» или Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բաժին 2 կ., տեկամների հատը կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Հայոց գիւղերում։ Քրոնիկան լուրեր։

Մեղ գրում են.—Ջուշայ։ Դանձակից։ Օլթուց։

Եկեղեցական հարցերի շուրջը։

Թղթակցութիւններ.—Ախալքալաք։ Բալախանի։ Նամակ Պարսկաստանից, Թաւրիզ։

«Մեծապատիւ մուրացկանները» Թէյրանի բեմի վրայ։

Նամակ խմբագրութեան։

Քաղաքական.—Մակեդոնիա։ Թիւրքիա։ Անգլիա։ Միացեալ Նահանգներ։

«Նոր-Դար»-ի հեռագրները։

Խառն լուրեր։

Բանաստեղծական.—Միմիայն մէկը։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս 27 Նոյեմբերի, 1902 թ.

ՀԱՑՈՑ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Ա.

Քաղաքների գոյութեան պատիւը—գիւղերն են։ Գիւղացիները իրենց բազուկներով, իրենց քրտինքով պահում և պահպանում են երկրի բնակչութիւնը, քաղաքացիներին։

Հետևաբար գիւղացիների նիստ ու կացը, գիւղացիների դրութիւնը նիւթական մէջ բարոյական տեսակէտից պէտք է որ մեզ համար հետաքրքրելի լինի և նրանց կուլտուրական զարգացման չափը որոշող լինի մի երկրի յառաջդիմութեան աստիճանը։

Ինչպիսի ողորմելի բնակարաններում են ապրում մեր գիւղացիները և առողջապահական ինչպիսի պայմաններում—այդ գիտենք, գիտենք և այն թէ որպիսի խաւարի մէջ է խորասուզուած մեր երկրի գիւղական բնակչութիւնը։

Գիւղացիների միտքը պէտք է լուսաւորել, պէտք է նրանց գիր սովորեցնել, պէտք է և շատ բան, քանի որ այդ ամենը ամենից առաջ կարող են ծառայել հէնց նրանց անտեսական բարւոք վիճակի ապահովացման։

Բայց ինչպէս ենք խաւարի մէջ խորասուզուած գիւղացու միտքը լուսաւորում երբ գիւղում դպրոցներ չունենք։ Եւ ինչպէս և՛ երբ ունի ժամանակ գիւղացին գիր սովորելու, քիչ շատ մտաւորապէս զարգանալու և՛ իրրև մտածող և՛ իրրև զգացող էակ ապրելու, քանի որ նա արեգակը դեռ չծագած ֆիզիքական, կոշտ աշխատանքի է կոչւում։ Դանչողը՝ հարկահանն է, կանչողը՝ վաշխառուն է, կանչողը՝ գոյութեան խնդիրն, մի կտոր ցամաք հացը՝ իւր երեխաների, իւր կնոջ, իւր մօր ...համար։

Այդ վիճակի մէջ, լոկ ֆիզիքական աշխատանքի պարտաւորած գիւղացին մրտեղ և ինչպէս սովորէ գիրը, ինչպէս իմանայ լէ ինքն ոմ է, ինչ է, ինչպէս սովորէ իւր կրօնը, իւր ազգի պատմութիւնը, լեզու և կուլտուրապէս զարգանայ։

Նա այդ չի կարող, մանաւանդ այն պայմաններում, որոնց մէջ գտնւում են մեր հայոց գիւղերը։

Բայց և այնպէս, եթէ գիւղերի վերաբերութեամբ բաղաքներն իրենց պարտքը կամենային կատարել մեր գիւղացիներն պիտի կարողանային աւելի բարւոք վիճակի հասնել, մի վիճակ, որ պիտի ծառայէր և բաղաքների օգտին։

Մեր գիւղերում ձմեռուայ որոշ ամիսներում գիւղացիներն համարեա թէ պարապ են մնում և հաւաքւում են իրենց «օդաներում» ժամանակ անցկացնելու. վախճանակ կերուխումի, արբեցութեան և հէքեաթներով և բամբասանքներով զբաղուելու, կարելի էր նրանց մտաւոր և տոգեկան զարգացման համար պահանջած սըրտի հետևողութիւն։

Ամենից առաջ գիւղացիների մէջ պէտք է տարածել գրագիտութիւնը։ Ամենայն ամենից յարմար այդ բարի գործում գիւղական քահանան է, որ գիւղացիների մէջ և գիւղացիների հետ ապրելով ամենից աւելի լաւ պէտք է հասկացած լինի նրանց լեզուն և ամենից աւելի դիւրութեամբ կարող է նրանց միտքը լուսաւորել, հարկաւոր պիտելիքներ հաղորդելով նրանց և ներգործելով նրանց մտքի, հոգու և բարոյականի վրայ։

Բայց ո՛րտեղ որոնենք գիւղական քահանաներին։

ՔՐՈՆԻԿՈՆ

Թագաւոր Գաւրիլ հաճոյ էր անցած 1877—1878 թուականների պատերազմի 25-ամեայ յոբելեանը կատարելու համար նշանակել Պլևնայի առման և Օսման-փաշայի զօրաբանակի գերման օրը, նոյեմբերի 28-ը։ Այս պատճառով, Գովկասի իշխան-կառավարչապետի հրամանով, երեկ երեկոյ, նոյեմբերի 27-ին, Ալէկսանդր-Նեվսկու զինուորական տաճարում հանդիսաւոր հոգեհանդիստ կատարուեց ի տէր հանգուցեալ Ալէքսանդր II և Ալէքսանդր III Կայսրների և 1877—1878 թուականների պատերազմում ընկած զինուորների համար։ Հոգեհանդիստ կատարեց Վրաստանի արքեպս էքզարքոս։ Իսկ այսօր, նոյեմբերի 28-ին, պատերազմի 25-ամեայ յոբելեանի օրը, նոյն տաճարում, բոլոր զօրամասերի ներկայութեամբ, հանդիսաւոր պատարագ կատարուի, որի ժամանակ Արսենալի լերան վրայ 21 անգամ թնդանօթ պիտի արձակուի։

—Նոցին Կայսերական Բարձրութիւնները Մեծ Իշխան Նիկոլայ Միխայիլովիչը և Մեծ Իշխան Գէորգի Միխայիլովիչն Օզոստափառ ամուսին Մեծ Իշխանուհի Մարիա Գէորգիևնայի և դուստր Իշխանազնուհի Նինա Գէորգիևնայի հետ մի այլ ստուերը անցաւ և փոխուեց ամբողջ պատկերը—գառը դայլ դարձաւ, բարեհամբոյրը տաժանացաւ, սէրը ատելութեան փոխուեցաւ։

Բոլոր մարդիկ ենթակայ են այդ անողոք երևոյթին։

Բայց Բռունցքեանը... նա ուրիշ էր։ Կանաչի մէջ նա այլ ուղի էր բռնել իրեն համար, կամ աւելի ճիշտ ասած՝ ստեղծել։ Իւրաքանչիւր տեղ ուրոյն վարմունք ու լեզու ցոյց տալ, իւրաքանչիւր տեղ ուրոյն հաշիւ տեսնել սրտի հետ։

—Քաղցը լեզուն ամենամեծ ղէնքն է։ Ջողմքոր գառը տատն մէկ կծէր։

Այս նրա արտաքին քաղաքականութեան դոգման էր։ Ցիրաւի քաղցրախօսութիւնը և կենսական զգուշութիւնը բաւական օգնում էին նրան։ Մարդիկ սոխոլուած էին սիրել կամ աւելի ճիշտ՝ վախենալ նրանից։

—Երես տաս՝ աստառ էլ կուզեն։ Եվիը սատանայ, միայն թէ վախենան քեզանից։

Այս էլ նրա ներքին քաղաքականութեան դոգման էր։ Ցիրաւի նա տանը մի հրէշ էր։ Երբ վեր կենար անկողնից, ամբողջ տան մէջ և բակում բերնէ բերան անցկացնելով հասցրել են մեզ։

Բռունցքեանը վատ մարդ չէր—այդ նշանակում է, որ նա ուր պէտք էր՝ քաղցը էր պահում իր լեզուն, քաղցը ինչպէս շաքար, թեկուզ շաքարից էլ աւելի։ Նա գրսում մեղմ էր, դուրճախոս, իսկ ընկերների և այդ ընկերների շրջանում յայտնի էր քաղցրախօս անունով։ Նա ամենայն սիրով սեպհականել էր իրեն այդ անունը, որ տուել էին նրան քաղաքի յայտնի մարդիկ՝ իւր մտերիմ ընկերները. ինչու՞ մերժել հասարակաց բարիքը։

—Մեռնելու չենք, ախպէր, դիմում էր նա բոլորին քաղցրախօսութեան րոպէներում։—Մեռնելը, մեռնելու ենք, մի քաղցր խօսքն է մնալու։ Եւ այս ասում էր այնպիսի մի եղանակով, որ լսողը կամայ ակամայ հաւատացնում էր իրեն, թէ խօսողը մի միամիտ և միևնոյն ժամանակ բարի մարդ է։

—Հա՜ ա՜, հաւատացնում էր կողքինը բանիդ կաց։

Զարմանալի է մարդկային սիրտը։ Քանի քանի տարրեր խառներ են տեղի ունենում այդ փոքրիկ մսի կտորի մէջ երբեմն կարճ, երբեմն տևող, երբեմն սկզբնաւոր, բայց անվախճան։ Ցեռնում ես մարդ է, ընկերոջ, բարեկամի համար մի հոգի, մի հրեշտակ, որից չես ուզում բաժանուել, բայց կբաժանես անցաւ որոշ ժամանակամիջոց, կեանքի նոյեմբերի 26-ին Բազուի արագ գնացքով Թիֆլիսից մեկնեցին Բալաջարի-Պետրովկի վերայով Պետերբուրգ։

—Զուգադիպի գաւառի Խորգա գիւղից «Նով. Օբ.»-ին հաղորդում են մի տարօրինակ դէպքի մասին. Դաթիա Սորդիա անունով մի խելագար գիւղացի կացնի հարուածներով սպանել է իւր մօրը, եղբօր կնոջը և նրա երկու զաւակներին, որոնցից մէկը 3 տարեկան տղայ է եղել և միւսը 6 ամսական աղջիկ։ Ամբոխը հազիւ կարողացել է վիճաբախ անել խելագարին և կապել նրան։

—Կիւրակի, դեկտեմբերի 1-ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի նիստի դահլիճում նշանակուած է Թիֆլիսի արհեստաւոր հատարակութեան դեպուտատների ընտրութիւն ժողով, որտեղ ի միջ այլոց, պիտի քննուի արհեստաւորների վարչութեան 1903 թուի և մասից նախահաշիւը։

—«Բակինսկիա Իզվեստիա» լրագիրը, «Նով. Օբ.»-ի ասելով, անցնում է նոր մարդկանց ձեռքը։ Տեղական մի քանի բնակիչներից կազմուել է մի ընկերութիւն, որը յիշեալ լրագիրը պիտի հրատարակի նոր աշխատակիցների մասնակցութեամբ։ Ընկերութեան անդամ են պ. պ. Արութչև, Անտոնով, Էյզենբէթ, պատուր Ցուլիմ և այլն։

—Խմբագրութիւնս ստացել է հետևեալ նոթագոյն հրատարակութիւնները. 1) թժ. Ա. Բուգուլեան—«Ուղեղի սիֆիլիսը», Պետերբուրգ 1902 թ. էջ 85, գինն է 20. 2) Ա. Ահարոնեան—«Խեղճերը», Թիֆլիս, 1902 թ. էջ 363, գինն է 1 ր., ճանապարհածախսով 1 ր. 20 կ.։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՁՈՒՉՈՒՅ.—Նոյեմբ. 24-ին, քաղաքիս Ոգուլնաց ս. Աստուածածին ատաղ եկեղեցում նոր երէցփոխի ընտրութիւն կար։ Ձայների բացարձակ մեծամասնութեամբ ընտրուեց պ. Յովսէփ Խաղուլեան, որ տարիներ առաջ քահանապետ պաշտօն էր վարում։

—

ԳԱՆՁԱԿԻՑ. — Այս տարի Գանձակի պատուհում գիհին թէև առատ է, բայց պնդողների բացակայութեան շնորհիւ գները զգալի կերպով ընկել են և գնողները էլ չկան. ամենալաւ գինին Գանձակում կարելի է գնել վեդրոն (30 ֆունդ) 1 ր. 30 կոպ. մինչև 1 ր. 40 կոպ., իսկ մեր հարևան Ելենենդորֆ գաղութում 1. 10-ից 1 ր. 20 կոպ.։ Եթէ այս տարի գինին չծախուի, ընտկանաբար պէտք է ազդէ առաջիկայ տարուայ գինու գնելի վրայ։ Այդեաէբերը կատարելապէս յուսահատութեան մէջ են։

—

ՕԼԹՈՑ.— Քաղաքումս պաշտօնական թուղթ ստացուեց տեղիս գործակալի հասցէին՝ Կարսի հոգևոր կառավարութիւնից, որ մօտ օրերս Կարսի փոխանորդ Գիւրեղ վարդապետն այցելելու է դալիս քաղաքիս և շրջակայ գիւղերի հայերին։ Ցանկալի էր հայր փոխանորդի չտատափուիլ գալը. ժողովուրդն ուրախացած անհամբեր սպասում է։ Ինչպէս հաստատ աղբիւրից տեղեկացայ, հանգուցեալ Գրիգորիս Ալբ-եպիսկոպոս Ազուանեանից յետոյ, մինչ օրս, ոչ մի առաջնորդ կամ փոխանորդ այս վիճակի հոյերին չէ եկել մխիթարելու։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Զգիտեմ, ինչ է պատճառը, որ Ներսէս քահ. Հերթեցեան, «Նոր-Դար»-ի № 165-ում պատասխանելով իմ № 153-ի յօդուածի մէջ՝ իւր առաջարկած «հարցը հրապարակից հետացնելու» ձգտում է նկատում, մոռանալով, որ ես իսկապէս «կարգաւորումների, բարեփոխումների չեմ փափագողներից» եմ։ Միթէ իւր առաջարկին սիրով վերաբերուած կլինէի ես, եթէ նրա դէմ ոչինչ առարկութիւն արած չլինէի։ Կամ—որ միևնոյն է—եթէ նրա առաջարկը՝ կարդացողների կողմից խոր լուռթիւն հանդիպելու լինէր, միթէ դա նրանց համաձայնութեան ապացոյց կլինէր։ Կամ ինչ երաշխաւորութիւն ունի նա, որ, եթէ ես կամ մէկ ուրիշը չխօսէր՝ իսկոյն «Հովուապետի կողմից մի թեթև (չատ թեթև) հրամանն» կարձակուէր և Մաշտոցի նոր տիպը գործադրուած կլինէր պոակի նոր կանոնով։ Եւ ինչու՞ այդպիսի առաջարկով հ. Ներսէս անմիջապէս ազգի Վեհ. Հովուապետին չէ դիմում։ Վերջապէս, իմ գրածն էլ հօ բարձրից իջած մի պատգամ չէր, որ հարցերը ըստ ինքեան լուծուէին։ Իմ արտայայտածը՝ ոչ աւել, ոչ պակաս, մի մասնական կար-

ԲԱՆԱՍՏԻՐԿԵԱՆ

ՄԻՄԻԱՅՆ ՄԷԿԸ

I

Այն օրը սովորականից շատ աւելի ուրախ էր Բռունցքեանը։ Եւ ինչու՞ ուրախ չլինի, կըմտածէր նրան առաջին անգամ տեսնողը, տունը լաւ, ապրուստը լաւ, գրպանը լիքը։ Նրա արտաքինն իրրև ապացոյց կարող էր ծառայել այդ ենթադրութեան—լայն կրես, յաղթանդամ իրան, հաստ, գրեթէ կախ ընկած փոր,—նշաններ, որոնք այնպէս բարձրացնում են մարդուն չքաւորի, խեղճի առաջ։ Այդ բոլոր բարեպատեհ պայմանների մէջ նրա կապոյտ, միշտ խաղացող աչքերն ու մերկ, պսպղուն ճակատն էին միայն հակառակ դիրք բռնել—նշաններ, որոնք ժողովրդի մէջ այնքան աննպատակ բացատրութիւնների տեղիք են տալիս։ «Ճաղատիից, քաչալից հեռու կաց»—ահա այն խրատը, որ իրական փորձերը դարերից ի վեր բերնէ բերան անցկացնելով հասցրել են մեզ։

Բռունցքեանը վատ մարդ չէր—այդ մի այլ ստուեր անցաւ և փոխուեց ամբողջ պատկերը—գառը դայլ դարձաւ, բարեհամբոյրը տաժանացաւ, սէրը ատելութեան փոխուեցաւ։

Բոլոր մարդիկ ենթակայ են այդ անողոք երևոյթին։

Բայց Բռունցքեանը... նա ուրիշ էր։ Կանաչի մէջ նա այլ ուղի էր բռնել իրեն համար, կամ աւելի ճիշտ ասած՝ ստեղծել։ Իւրաքանչիւր տեղ ուրոյն վարմունք ու լեզու ցոյց տալ, իւրաքանչիւր տեղ ուրոյն հաշիւ տեսնել սրտի հետ։

—Քաղցը լեզուն ամենամեծ ղէնքն է։ Ջողմքոր գառը տատն մէկ կծէր։

Այս նրա արտաքին քաղաքականութեան դոգման էր։ Ցիրաւի քաղցրախօսութիւնը և կենսական զգուշութիւնը բաւական օգնում էին նրան։ Մարդիկ սոխոլուած էին սիրել կամ աւելի ճիշտ՝ վախենալ նրանից։

—Երես տաս՝ աստառ էլ կուզեն։ Եվիը սատանայ, միայն թէ վախենան քեզանից։

Այս էլ նրա ներքին քաղաքականութեան դոգման էր։ Ցիրաւի նա տանը մի հրէշ էր։ Երբ վեր կենար անկողնից, ամբողջ տան մէջ և բակում բերնէ բերան անցկացնելով հասցրել են մեզ։

Բռունցքեանը վատ մարդ չէր—այդ նշանակում է, որ նա ուր պէտք էր՝ քաղցը էր պահում իր լեզուն, քաղցը ինչպէս շաքար, թեկուզ շաքարից էլ աւելի։ Նա գրսում մեղմ էր, դուրճախոս, իսկ ընկերների և այդ ընկերների շրջանում յայտնի էր քաղցրախօս անունով։ Նա ամենայն սիրով սեպհականել էր իրեն այդ անունը, որ տուել էին նրան քաղաքի յայտնի մարդիկ՝ իւր մտերիմ ընկերները. ինչու՞ մերժել հասարակաց բարիքը։

—Մեռնելու չենք, ախպէր, դիմում էր նա բոլորին քաղցրախօսութեան րոպէներում։—Մեռնելը, մեռնելու ենք, մի քաղցր խօսքն է մնալու։ Եւ այս ասում էր այնպիսի մի եղանակով, որ լսողը կամայ ակամայ հաւատացնում էր իրեն, թէ խօսողը մի միամիտ և միևնոյն ժամանակ բարի մարդ է։

—Հա՜ ա՜, հաւատացնում էր կողքինը բանիդ կաց։

Զարմանալի է մարդկային սիրտը։ Քանի քանի տարրեր խառներ են տեղի ունենում այդ փոքրիկ մսի կտորի մէջ երբեմն կարճ, երբեմն տևող, երբեմն սկզբնաւոր, բայց անվախճան։ Ցեռնում ես մարդ է, ընկերոջ, բարեկամի համար մի հոգի, մի հրեշտակ, որից չես ուզում բաժանուել, բայց կբաժանես անցաւ որոշ ժամանակամիջոց, կեանքի

Թէ ով էր վեր կենողը, աւելորդ էր հարցնել։ Բոլորին հասկանալի էր լինում այդ սոսկալի փոխուկի առաջին։

—Երեսը լուանում է, չուտով դուրս կըզայ...

Գալիս էր երկրորդ լուրը՝ աւելի տպաւորիչ, աւելի երկիւղալի. Վերարկուն հագնելը ամենից երկիւղածութեամբ էր ընդունւում. ծառաները գնների ճեղքուածներից դողալով դիտում էին, մինչև որ հրէշը փքուած դուրս էր գալիս փողոց, տանելով իւր հետ բոլորի սարսափն ու սեհեռած հայեացքները. այստեղ միայն բոլորը մէկ անգամ ազատ և խոր շունչ էին քաշում և գործի կպչում։

Բայց այն օրը սոսկալի ուրախ տրամադրութեան մէջ էր Բռունցքեանը։ Առաւօտեան համբուրեց, գուրգուրեց երեխաներին, սիրալիր կատակներ արաւ կնոջ հետ։ Ծառաներին անգամ չմոռացաւ բաժին հանել այդ հաղուագլուխ շնորհներից։

Տիկին Բռունցքեանը զարմացել էր։ Միթէ սա իւր մտայլ ամուսինն է։

—Կարապետ... ասած ու չկարողացաւ խոկոյն վրայ բերել։—Կարապետ, ինչ կըլիներ բոլոր առաւօտներն այսպէս լուսանայլին մեզ համար։

Կարապետը ժպտաց. այդ ժպիտը կարճ էր և ժլատ։ Ո՞ւմ, որքան թանկ է լինում բանուորի ժպիտը, թէկուզ ամենաթեթև ժպիտը։ Բարի մարդու հարիւր ծիծաղ քրքիջը բանուորի կէս ժպտի տեղը չեն կարող բռնել։

—Ինչ կլինի որ մեր աղէն ամեն օր այսպէս լինի, վազելով խոհարարի մօտ, ասաց սպասաւորը.—էս րոպէին խանումի մօտ նա իմ ուսին խփեց և ժըպտաց.

—Տեսնես ում տունն է քանդել, պատասխանեց խոհարարը անտարբերութեամբ, չարունակելով մաքրել ձուկի կանաչին։—Նա ուրախ է լինում սովորաբար, երբ մէկին մեծ վնաս է հասցրած լինում։ Ինչ բարի պտուղ աղա ես գաս։

—Ասում էր երեկոյեան մեծ խրախճանք է լինելու, պատրաստութիւն տեսէք։ Դէ պատրաստուիր, որ հետը գնալու ենք չուկայ։

—Ուրեմն սխալուած չեմ.—ասաց խոհարարը ծոծրակը քորելով.—հա մի գէնը նայիր և ականջ դիր։

Հարևան խրճիթի չէմքին նստած էր մի չորացած պառաւ, ձեռքերը մերթ դէպի Բռունցքեանի տունը, մերթ դէպի երկինք տարածելով անէծքներ էր կարդում։

Բուրգեցին ուշադրությամբ լսում էր նրան, ոչ մի խոսք չկորցնելով։ Երբ Ալեքսանդրը վերջացրեց, նա ասաց.

— Ես ուրախ եմ, որ դուք ինձ ասացիք այդ ամենը։ Ես ձեզ խորհուրդ կտամ ոչ մի խոսք չասել ոստիկանության առաջ։ Ես ինքս կգնամ նրանց մոտ և կասեմ, որ դուք ինձ ամեն ինչ խոստովանել եք։ Ես կասեմ, որ դուք ինձ ասացիք, թե ինչ եղավ Ռոզենֆելդում, և որ ես ձեզ խոստացել եմ, որ ոստիկանությանը ոչինչ չեք ասի

ՓԱՐԻԶ, 5 նոյեմբերի.—Լուսաւո-
րութեան նախարարութիւնը յայ-
տարարեց, որ Ֆրանսիոյ մէջ կան
19-ի չափ «ազատ համալսարան-
ներ», որոնք ունին 1500 ուսանող-
ներ։ Այս համալսարանները ունին
ընդհանուր 3 ընթերցարան, որոնց
մէջ կան 30 հազար հատոր գիրք։
Ասոնցմէ զատ կան 15 ուսանող-
ներու ակումբներ, որոնք ունին
ընդհանուր 2 հազար անդամներ։
Ասոնց մէջ կան 6 հազար կանայք։
Ուսանողներու ակումբներուն մէջ
կան նաեւ ընթերցարաններ։ Ակում-
բներուն մէջ կան նաեւ սենեակներ
ուր ուսանողները կրնան հանդի-
պիլ իրարու հետ։ Ակումբներուն
մէջ կան նաեւ սենեակներ ուր ու-
սանողները կրնան ճաշել։ Ակում-
բներուն մէջ կան նաեւ սենեակներ
ուր ուսանողները կրնան ճաշել։
Ակումբներուն մէջ կան նաեւ սե-
նեակներ ուր ուսանողները կրնան
հանդիպիլ իրարու հետ։ Ակումբ-

երկար նամակի մէջ նա եռանդուն կերպով պաշտպանում է Կրումին յիշեալ նաւահանգստի կառավարիչ նշանակելը և ասում է, որ ինքը միշտ պաշտօնակատարը կընշանակի ամենից աւելի ընդունակ և յարմար անձերին, առանց նայելու ինչ ծագումից լինելուն։ «Որքան օրէնքն ինձ թոյլ կը տայ,—գրում է նախարարը,—ես միշտ կաշխատեմ ի նկատի առնել իւրաքանչիւր գաւառի ժողովրդի յանկութիւնները ու ղգացումները, բայց ես չեմ կարող համաձայնել հասարակական գործունէութիւնից զրկելու այդ բանին կատարելապէս արժանի մի մարդու միմիայն նրա ցեղի կամ մորթի գոյնի պատճառով»։ Ամերիկան մամուլը չի վստահանում հաւանութիւն տալ նախագահի այդ կարգադրութեանը, ինչպէս և հաւանութիւն չտուեց նա անցած տարի այն բանին, որ Բուկեր Ուաշինգտօն անունով նեգրը ճաշի էր հրաւիրուել նախագահի մօտ Սպիտակ տանը։

„ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ՀԵՌԱԳ. ԴՈՐԹԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Նոյեմբերի 27-ից

ՎԱՇԻՆԳՏՈՆ. — «Morning Post»-ին նայած արտաքին գործերի մինիստրութիւնը համաձայն է Անգլիայի և Գերմանիայի՝ վենեցուէլին ուղղած սպառնագրին, որով ծովային զօրքերը կը գրաւեն մաքսատունը, մինչև ծագած վէճի կարգաւորումը։ Միացեալ-Նահանգները չեն խառնուիլ նրանց գործողութիւններին։

ԴԱՐՄՇՏԱՏ.—Մեծ Իշխան Սերգէյի Ալէքսանդրովիչը իւր ամուսնու հետ այստեղ հասաւ, որտեղ դիմաւորեց Մեծ-Հերցոգը։

Կ. ՊՈԼԻՍ.—Ֆրանսիան բողոք ներկայացրեց Դրան, որ Թրիպոլիսի սահմաններում զօրքերի գումարումն է տեղի ունենում։

ՎԵՆՆԱ.—Վաղը կառավարութիւնը բայխստագին կներկայացնի ի հաստատութիւն Բրիւսելեան չաքարի պայմանագիրը. բայխստագը կընդունէ այդ պայմանագիրը, որից աւստրիական չաքարի արտահանումը չի վնասուիլ, այն ինչ պայմանագրի մերժումը այն հետևանքն կունենար, որ աւստրիական չաքարը այն պետութիւնների չուկաներից, կրեհացուէը որոնք ընդունել են պայմանագիրը։

ՎԱՇԻՄԱՐ.—Մեծ-Հերցոգը նշանակել է պրինցես Կոբալինա Բէյսի վրայ։

ԼԱՍԷՅՀԱՒ.—Գերմանիայի և Անգլիայի նեկայացուցիչները մեկնեցին Կարակասից, վասն զի վենեցուէլեան կառավարութիւնը պատասխան չտուաւ։

ԲԵՐԼԻՆ։—Բայխստագը, 206 ձայների մեծամասնութեամբ 92 ձայնի դէմ, 8 ձեռնպահ մնացին, ընդունեց Գերլեցի առաջարկը, որով խօսելու հերթի կարգի մասին որոշումը վերապահում է նախագահին անօրինելու ինչպէս ինքը բուլոք կը համարէ, իսկ ճառերը 5 րոպէից աւելի չպէտք է տեւեն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—«Գեւտական Համբաւաբերում» տպուած է տեղեկութիւն ֆինանսների մինիստրութիւնից, որ զգուշացնում է բարձրացրած դներով հողերի առևտուրի սպեկուլացիայից։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

երկուշաբթի, 1902 թ. դեկտեմբերի 9-ին, նշանակուած է պ.պ. անդամների

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

քուէարկելու կանդիտատներին և քննելու տնտեսական և ուրիշ խնդիրներ, որի համար անհրաժեշտ է անդամների ամբողջ կազմութեան ոչ պակաս քան մի երրորդական մասի մասնակցութիւնը։

(1105) Թիւնը։ 3—2

ԼՕԳՈՒ ՏԵՂԱՒ

ՆԱՐ-ԴՈՍ

ՏԱՆՏԻՐՈՋՄ ԱՂՋԻԿԸ

Վ. Ի Պ Ա Կ

գինն է 20 կոպէկ

Դիմել՝ Թիֆլիսում--«Գեղրոնական», «Դուտ տենբերգ» և Զաքարիա Իրիգորեանցի գրավաճառանոցները և Բալախանում—պ. Ստ. Գեանջեցեանին (Թումայեանի նաւթ. ընկ. գրասենեակ)։

Ֆինանսների մինիստրութեան իրաւասութեան տակ գտնուող

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

հիմնակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերական հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնական բաժնի կողմից ընդունուած է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում։
ՊՇՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։
2) Առևտրական թուաբանութիւն։
3) Առևտրական թղթակցութիւն։
4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։
5) Վայելչագրութիւն և ուղղագրութիւն ամենալատ ձեռագրի։

Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսւում են 1903 թուի յունուարի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 րուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին արւում են, ֆինանսների մինիստրութեան հաստատուած ծրագրի համաձայն ատեստատներ։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамянцу, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրը ուղարկւում է ձրի։

Վերևում յիշուած ձեռնարկը ծախւում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։

(1108) 30—1

ԵՂՐ. ԾՈՎԵԱՆԵԱՆՆԵՐ ԵՒ ԸՆԿ.

ՌՈՒՍՏՐԱԿԱՆ ՏԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է ի գիտութիւն այն անձանց, որոնք յիշեալ տան բանկային գրասենեակում գրաւ են դրել խաղարկութեան տոմսակներ, որ պարտքատէրերի այս տարուայ նոյեմբերի 3-ի կայացած արտակարգ ընդհանուր ժողովի որոշման համաձայն, այդ տոմսակները նրան չի վերադարձնուիլ, բայց նրանք կընդամենուն Առևտրական տան պարտքատէրերը կուրսի գնի և պարտք վերցրած փողի տարբերութեան գումարի, Իսկ այն անձինք, որոնք կրկամենան ազատել գրաւից իրանց տոմսակները, կարող են դիմել Վարչութեան Թիֆլիսի գրասենեակը, որտեղ նրանց ցոյց կըտրուի, թէ որ բանկային հիմնարկութեան մէջ են գրաւ դրուած իրանց տոմսակները, որոնց թափելու ժամանակ օրուայ վերջ լիովին պէտք է ներկայացուի ցոյց տրուած բանկը։ Տոմսակները կարող են ազատել գրաւից մինչև 1903 թուի ապրիլի 30-ը։

(1107) 3—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ×××××× ×××××× ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Կեանքի ապահովագրութեան գործը տարէցտարի աւելի ու աւելի հսկայական ծաւալ է ստանում։ Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ ներկայումս ամբողջ աշխարհում ապահովագրուած է 20.000,000,000 րուբլու, և ամեն տարի ապահովագրւում է կէս միլիոն րուբլու։

Ապահովագրութեան գործի այսպիսի տարածումն անհրաժեշտ է կացուցանում ապահովագրուողներին տալու ամեն տեսակ արտօնութիւններ և յարմարութիւններ, ինչ որ ասել է այժմ կեանքի և ցմահ ապահովագրութեան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ, որի կանոնադրութիւնն իւր մէջ պարունակում է ուրիշ ապահովագրական ընկերութեանց բոլոր լաւ կողմերը և աղատ է նրանց բոլոր թերութիւններից։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ապահովագրութեան հիմքը կազմում են՝ պրեմիաների էժանութիւնը, պոլիսների անվիճելի լինելը, պրեմիաների մաս-մաս վճարումը, պոլիսների խանգարելի չլինելը. ձրի պոլիս, պոլսի զօրաւորեցումն, օգուտներին մասնակցելը և այլն։

Այս բոլորի չնորհիւ կեանքի ապահովագրութեան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ գործում է մրցութիւնից դուրս և ամենքին հնարաւորութիւն է տալիս անհրաժեշտ կերպով խնայողութիւններ անելու և ապահովելու իրեն ու իւր ընտանիքը։

Ռոստովի (Դոնի վրայ) շրջանի վարչութեան գրասենեակը Դոնի, Կուբանի և Թերեքի շրջանների ամառարտալի ու սև ծովի նահանգների համար գտնւում է

Ռոստովում-Դոնի վրայ, **ՉԱԽԿՐԵԱՆԻ** եւ **ԸՆԿ.** բանկային տան մէջ

հարկաւոր են ներկայացուցիչներ Վլադիկաւկազում, Ղզլարում, Մոզդոկում, Ներմանիրում. Եկատերինոդարում, Անապայում, Սոչիում և այլ հայաբնակ քաղաքներում Հիւսիսային Կովկասում։

(1071) 20—11



ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

ԳՐԱՄԱՓՈՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիսի Զօլովինսկի պրոսպեկտ, տուն Ներնեանցի. № 7 Այսու պատիւ ունիմ ի գիտութիւն յարգելի գնողների հաղորդելու, որ հրապարակի վրայ յատնուել են մեր գրամաՓՆՆերի և պլատՓինների և գործիների նման չնուազ քներ և որ ցաւալի է հասարակութիւնը մոլորեցնելու դիտաւորութեամբ, ծախւում են պակասցրած գներով և բազմատեսակ խոստումներով, որոնց վանճանն այն է լինում, որ գնողները իրենց առած տպրանքի և պլատինի վերաբերութեամբ հիասթափւում են։

ԳրամաՓՆՆներ և նրանց համար պլատիններ առնել կանխագոյներին խորհուրդ ենք դիմել մեր խանութում, ուր կարելի է անձամբ համոզուել, թէ որքան տարբերութիւն կայ և մեր ուրիշների կողմից առաջարկածների մէջ և որ գլխաւորն է, առևտրը միշտ դէմ դրսում։

(1901) **ԸՆԿԱՊԱՏԱՍՏՐԱՆ ՆԱՏԱԼԻՈՎՆԵՐ** աճմիշ ազէտ կատարելապէս ձրիապէս 25—8

1855 թ. Մոսկուա 1882 թ. Մոսկուա

1870 թ. Ս.-Պետերբուրգ **ԿՐԿՆԱԿՕՃԻԿՆԵՐԻ** 1896 թ. Նիժնի-Նովգորոդ

ԵՒ ՌԵՏԻՆԻ ՈՒՐԻՇ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱՐԳԵՒԸ (GRAND-PRIX)

Պարիզի ցուցահանդէսում տրուած է Ռուսիայում ՄԻԱԿ

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՌԵՏԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ,

որը հիմնուած է 1860 թուականին։

Խնդրում են ՌԵՏԻՆԻ ԿՐԿՆԱԿՕՃԻԿՆԵՐ գնելիս ուշադրութիւն դարձնել տակերի վրայ եղած պրոշմներին



մանաւանդ Ընկերութեան հիմնադրութեան „1860“ թուականի և „С.-Петербургъ“ բառի վրայ, որոնք գտնուած են եռանկեան մէջ (գործարանի պրօշմը)։

մեծ բանակութեամբ վաճառւում է

„ԼՕՊԱՏԻ ՆԻԺՂԵԼԵՐ“ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Ս.-Պետերբուրգում, Մոսկուայում, Ռիգայում, Ռոստովում-Դոնի վրայ, Եկատերինոդարում, Իրկուտսկում եւ Խարկովում

(1057) 35—22

Дозволено цензурою Тифлисъ, 27-го ноября 1902 г. Տպարան ընկ. «Վերեիչն և Կամենմախեր» Типографія Т-ва „Вереичевъ и Каменмахеръ“, Михайловск. пр., № 18 Телеф. № 852